



ՆԱԽԱՐԱՐ

MINISTER

« » 201

..... /

ՀՐԱՄԱՆ N 370-Ա

21 դեկտեմբերի 2015թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ
ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի N1049-Ն որոշման N1 հավելվածի 13-րդ 4-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 17-ի «Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում լրացումներ կատարելուն համաձայնություն տալու մասին» N 1125-Ա որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավարի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 36-1.1-1) անձնագրի՝
 - ա. 10-րդ կետի «բ» ենթակետի «օրենքների,» բառից հետո լրացնել «հակակոռուպցիոն ռազմավարությունների ծրագրերի և ոլորտը կարգավորող օրենսդրության,» բառերը.
 - բ. 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «իգ.1» ենթակետով.
 - «իգ.1) համակարգում է հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման աշխատանքները.».
2. Իրավաբանական վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 36-2.1-12) անձնագրի՝
 - ա. 10-րդ կետի 2-րդ ենթակետի «օրենքների,» բառից հետո լրացնել «հակակոռուպցիոն ռազմավարությունների ծրագրերի և ոլորտը կարգավորող օրենսդրության,» բառերը.

բ. 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8.1-րդ ենթակետով.

«8.1) ապահովում է հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների իրականացումը.».

3. Իրավաբանական վարչության գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 36-2.3-16) անձնագրի՝

ա. 10-րդ կետի 2-րդ ենթակետի «օրենքների,» բառից հետո լրացնել «հակակոռուպցիոն ռազմավարությունների ծրագրերի և ոլորտը կարգավորող օրենսդրության,» բառերը.

բ. 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-րդ ենթակետով.

«5.1) իրականացնում է հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքները.».

4. Իրավաբանական վարչության առաջատար մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 36-3.2-17) անձնագրի՝

ա. 10-րդ կետի 2-րդ ենթակետի «օրենքների,» բառից հետո լրացնել «հակակոռուպցիոն ռազմավարությունների ծրագրերի և ոլորտը կարգավորող օրենսդրության,» բառերը.

բ. 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-րդ ենթակետով.

«4.1) մասնակցում է հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների իրականացմանը.»:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՐՅԱՆ

